Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը Հայոց բանակի 28-րդ ամյակի առթիվ
29.01.2020

Սիրելի՛ հայրենակիցներ,
Շնորհավորում եմ Հայոց բանակի օրվա առթիվ:

Հայ ժողովրդի նորագույն պատմության կարևորագույն ձեռքբերումներից մեկը Հայոց բանակն է, որը ձևավորվեց 28 տարի առաջ՝ մեզ համար ճակատագրական պահին:

Արցախյան ազատամարտի տարիներին ծնունդ առած հայկական բանակը մշտապես ապացուցել է իր հզոր և անպարտելի լինելը:
Այսօր մենք խաղաղ ենք, քանի որ հերոսներ են իրենց կյանքը տվել մեր հայրենիքի համար:
Ռազմական գործին նվիրված թանկագի՛ն զինվորականներ, ձեզանով են ամուր մեր հայրենիքի սահմանները: Ձեր անսպառ հայրենասիրությամբ, ռազմական հմտություններով դուք ապահովել և ապահովում եք Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգությունը:
Մեր բանակն առավել հզորացնելու համար այսօր իրականացվում են բարեփոխումների լայնածավալ ծրագրեր՝ նոր սպառազինությունների ձեռքբերման, դիրքերի բարեկարգման, զինվորի սննդի, հագուստի, կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:
Շնորհավորում եմ բոլորիս, զինվորականներին մաղթում եմ բարի ծառայություն. խաղաղություն հայոց աշխարհին: